

«ՎԵՈՆԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրագծեր	5
1.2. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.3. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	18
1.4. Ջրահեռացման համակարգ	18
1.5. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	20
1.6. Էներգոհամակարգ	21
1.7. Մեքենա-մեխանիզմներ	23
2. Առևտրային տնօրինություններ	24
2.1. Բաժանորդների տվյալներ	25
2.2. Հասույթ	25
2.3. Գանձում	29
2.4. Դեբիտորական պարտքեր	27
2.5. Ջրաչափեր	31
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	32
3. Տեխնիկական տնօրինություն	33
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	34
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	36
3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ	38
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ	39
4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	40
4.1. Համակարգչային ցանց	41
4.2. Ինտերակտիվ համակարգ	41
5. Լրատվական ծառայություն	42
6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	45
6.1. Փաստադրժերի մշակում	46
6.2. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ	46
6.3. Դասընթացներ /Սեմինարներ	46
6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	48

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





1.1. Ջրագծեր

Քաղաք Գյումրի

● Հացիկի խճուղու մոտակայքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Օղակային ջրատարից անջատված չեն հին ջրագծերը և առկա է 2 մեծ վթար: Ձեռնարկված համապատասխան աշխատանքների արդյունքում խցափակման եղանակով անջատվել են $D=50$ մմ $L=150$ մ և $d=100$ մմ $L=580$ մ ջրագծեր, ինչպես նաև վերացվել են վթարները: Իրականացված աշխատանքներն առավել քան արդյունավետ են. խնայվել է $Q=63$ լ/վ ջրաքանակ, ցանցը դարձել է կառավարելի, բարձրացել է դրա ճնշումը և բարելավվել է ցանցի ջրամատակարարումը:



Օղակային ջրատարի ջրամատակարարման սխեմա


1.2. Ջրամատակարարման համակարգի կառավարում

Քաղաք Երևան

● Ուլնեցի փողոց 6 հասցեում արձանագրված ջրամատակարարման խնդրի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վթարվել է Ուլնեցի-Դ.Անհաղթ փողոցի խաչմերուկով անցնող $D=300$ մմ պողպատե ջրագիծը, որի ֆասսված հատվածը փոխարինելու արդյունքում խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:



Դ.Անհաղթ փողոցի ջրամատակարարման սխեմա




● Նորագյուղի Խանջյան փողոցում՝ Ոստիկանության վարչության մոտ իրականացված վթարառոտնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 2 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 2 լ/վ ջրաքանակ:

● Նոր Արեշ 7 փողոցում իրականացված վթարառոտնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, տնտեսվել է մոտ 1 լ/վ ջրաքանակ:

● Վիկտոր Համբարձումյան փողոցի 47 շենքի ջրամատակարարման խնդրի պատճառը $D=100$ մմ ջրագծի վրա հայտնաբերված վթարն էր: Ներարկման միջոցով $D=63$ մմ $L=20$ մ պոլիէթիլենային ջրագծի փոխարինումից հետո խնայվել է $Q=0.3$ լ/վ:




Համբարձումյան փողոցի 47 շենքի ջրամատակարարման սխեմա



Քանաքեռական գյուղի ջրամատակարարման սխեմա

● Քանաքեռական 11 փողոցում $D=150$ մմ $L=80$ մ և $D=80$ մմ $L=52$ մ պողպատե ջրագծեր կառուցելուց հետո շահագործումից հանվել են փողոցով անցնող $D=150$ մմ $L=88$ մ, $D=100$ մմ $L=170$ մ և $D=80$ մմ $L=60$ մ հին ջրագծերը: Կատարված աշխատանքների շնորհիվ խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:

● Քանաքեռական 11 փողոցի 53 տան մոտակայքում $D=150$ մմ ջրագծի վրա տեղադրվել է $D=100$ մմ ճնշման կարգավորիչ փական՝ ջրամատակարարման ցանցում ճնշումը կարգավորելու նպատակով: Բացի այս, փոխարինվել է փողոցի վթարային $D=200$ մմ $L=80$ մ հատվածը $D=150$ մմ պոլիէթիլենային խողովակով: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=1,5$ լ/վ ջրաքանակ:



Քանաքեռական 11 փողոցի ջրամատակարարման սխեմա



Մարգարյան փողոցի 12 շենքի ջրամատակարարման սխեմա


● Մարգարյան 12 շենքի մուտքագծի վթարը վերացնելու նպատակով այն փոխարինվել է $D=50$ մմ $L=12$ մ նոր խողովակով, ինչի շնորհիվ խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Գյումրի

● Շիրակացի 85 հասցեի մոտով անցնող պողպատե ջրագիծն ամբողջությամբ քայքայված էր: $D=100$ մմ $L=70$ մ ջրագիծը խցափակման միջոցով շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=63$ մմ $L=70$ մ պոլիէթիլենային ջրագիծ:



Շիրակացի փողոցի ջրամատակարարման սխեմա



Անտառավան 3-րդ թաղ.-ի ջրամատակարարման սխեմա

● Անտառավան 3-րդ թաղամաս 18գ շենքի մոտակայքում պողպատե $D=40$ մմ $L=13$ մ ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում: Այն շահագործումից հանելու նպատակով ներարկման միջոցով անցկացվել է $D=32$ մմ $L=13$ մ պոլիէթիլենային խողովակ: Արդյունքում բարելավվել է նշված թաղամասի ջրամատակարարումը և խնայվել $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:

● Շիրակացի 61ա հասցեում հայտնաբերվել է $D=100$ մմ $L=230$ մ հին քայքայված ջրագիծ, որի շահագործումից հանելուց հետո խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:




Շիրակացի փողոցի ջրամատակարարման սխեմա

● Կրիտյան 56 հասցեում խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=32$ մմ $L=57$ մ պողպատե վթարային ջրագիծ, ինչի շնորհիվ ցանցը դարձել է կառավարելի: Իսկ Շարա-Տայյան փողոցի մոտակայքով անցնող $D=50$ մմ $L=80$ մ վթարային ջրագիծը խցափակման միջոցով շահագործումից հանվելու արդյունքում խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:



Կրիտյան փողոցի ջրամատակարարման սխեմա




Շարա-Տայյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Հ.Սարգսյան փողոցում $D=50$ մ $L=35$ մ վթարային ջրագիծը խցափակման միջոցով շահագործումից հանելու արդյունքում բարձրացել է ցանցի ճնշումը և խնայվել $Q=0,2$ լ/վ ջրաքանակ:




Հ.Սարգսյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Գ. Նժդեհ-Շարա-Տայյան փողոցների խաչմերուկի ջրամատակարարման սխեմա

● Գ.Նժդեհ - Շարա-Տայյան փողոցների խաչմերուկի մոտայքում ուսումնասիրություններ կատարելուց հետո խցափակվել է $D=400$ մ $L=5000$ մ պողպատե ջրագիծ: Իրականացված աշխատանքների շնորհիվ խնայվել է $Q=15$ լ/վ ջրաքանակ, ինչի արդյունքում բարձրացել է ցանցի ճնշումը և բարելավվել է դրա ջրամատակարարումը:

● Շիրակացի-Գերցեն փողոցների խաչմերուկում խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=400$ մ $L=3000$ մ թուջե ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=12$ լ/վրկ:



Շիրակացի-Գերցեն խաչմերուկի ջրամատակարարման սխեմա

● Փանյան փողոցում խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=80$ մ $L=80$ մ պողպատե ջրագիծ՝ խնայելով $Q=0,6$ լ/վ ջրաքանակ: Իսկ 231 տնակային ավանում $D=40$ մ $L=85$ մ քայքայված ջրագիծը խցափակման եղանակով շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=25-32$ մ $L=85$ մ նոր պոլիէթիլենային ջրագիծ:



Փանյան փողոցի ջրամատակարարման սխեմա



231 տնակային ավանի ջրամատակարարման սխեմա

● Շարունակելով հին և քայքայված ջրագծերը շահագործումից հանելու աշխատանքները՝ հաշվետու ամսվա ընթացքում խցափակվել են նաև Եսայան 233/4 հասցեի D=50մ L=30մ պողպատե ջրագիծը խնայվելով Q=0,5լ/վ ջրաքանակ, Ռ. Դանիելյան փողոցի D=40մ L=50մ ջրագիծը խնայելով է Q=0,2 և/վ ջրաքանակ, Կ. Դեմիրճյան փողոցի D=50մ L=70մ պողպատե ջրագիծը խնայելով Q=1լ/վ ջրաքանակ և Ղարիբջանյանի խճուղու 2/9 հասցե D=32մ L=55մ ջրագիծը խնայելով Q=0,8 և/վ ջրաքանակ:



Եսայան փողոցի ջրամատակարարման սխեմա



Ռ. Դանիելյան փողոցի ջրամատակարարման սխեմա




Կ. Դեմիրճյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Ղարիբջանյանի խճուղու ջրամատակարարման սխեմա


● Գերցեն 211 տնակային ավանի մոտակայքում խցափակման միջոցով շահագործումից հանվել է D=500մ L=3050մ պողպատե ջրագիծը, ինչի արդյունքում խնայվել է Q=47լ/վրկ ջրաքանակ:



Գերցեն 211 տնակային ավանի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Վանաձոր

● Չուխաջյան թաղամասի 28 և 44 շենքերի ջրագծերը, որոնք կառուցվել էին 1980-ական թվականներին, քայքայված լինելու պատճառով գտնվում էին հետագա շահագործման համար ոչ պիտանի վիճակում: 28 շենքի D=50մ L=15մ և 44 շենքի D=40մ L=20մ ջրագծերի հատվածները նորով փոխարինելու արդյունքում վերացան տեղի կրկնվող վթարները և խնայվեց համապատասխանաբար Q=0,2լ/վ և Q=0,3լ/վ ջրաքանակ:




Չուխաջյան 28 շենքի ջրամատակարարման սխեմա



Չուխաջյան 44 շենքի ջրամատակարարման սխեմա

● Աղայան փողոցի E1 շենքի մոտակայքում հաճախակի կրկնվող վթարների պատճառը գտնելու համար ձեռնարկված ուսումնասիրությունները փաստել են, որ խնդիրը նախորդ դարի 80-ականներին կառուցված ջրագիծն էր, որը այլևս հնարավոր չէր շահագործել: $D=57$ մմ ջրագծի փոխարինումից հետո ցանցում բարձրացավ ջրի ճնշումը, կանխվեց վթարների առաջացումը, ինչպես նաև խնայվեց $Q=0,3$ լ/վ ջրաքանակ:



Աղայան փողոցի E1 ջրամատակարարման սխեմա



Մաշտոց փողոցի ջրամատակարարման սխեմա

● Մաշտոցի փողոցը սնուցող ջրագծի վրա հայտնաբերված վթարը վերացնելու նպատակով փոխարինվել է $D=57$ մմ ջրագծի $L=11$ մ հատվածը: Արդյունքում խնայվել է $Q=0.5$ լ/վ ջրաքանակ:

● Հակոբյան փողոցով անցնող $D=150$ մմ $L=200$ մ վթարային ջրագիծը սնուցում էր ապահովում երկու բաժանորդների համար: Այն խցափակման միջոցով դուրս է բերվել շահագործումից, իսկ բաժանորդների միացումները կատարվել են գուգահեռ փողոցով անցնող $D=150$ մմ ջրագծից: Աշխատանքներն իրականացնելուց հետո խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:



Հակոբյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Սևան

● Կուփտաս, Բաբաջանյան և Ս.Սևանցի փողոցները սնող ջրագիծը գտնվում էր խիստ քայքայված վիճակում: Երկարատև շահագործման հետևանքով այն ենթարկվել էր կոռոզիայի, ինչը հանգեցնում էր հաճախակի վթարների: Խնդրի կարգավորման նպատակով «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է ջրագծի վերակառուցման աշխատանքներ: Շահագործումից հանված $D=25-150$ մմ $L=730$ մ պողպատե ջրագիծը փոխարինվել է $D=20-50$ մմ $L=440$ մ պոլիէթիլենային խողովակաշարով:

● Վերակառուցման աշխատանքների շրջանակում կատարվել են նաև ջրաչափական դիտահորերի տեղադրման աշխատանքներ, թվով 16 բաժանորդների ջրաչափական սարքեր տեղափոխվել են սահմանազատման կետեր: Կատարված աշխատանքների արդյունքում ապահովվել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, խնայվել է մոտ 5լ/վ ջրաքանակ:

● Վթարառորոնողական աշխատանքներ են իրականացվել նաև Սևան քաղաքի Նայիրյան փողոցում, որի արդյունքում հայտնաբերվել է վերացվել է թվով 1 վթար, խնայվել է մոտ 15 լ/վ ջրաքանակ:




Քաղաք Արթիկ

● 1-ին ՕԿՁ-ի մոտ խցափակումով շահագործումից հանվել է $D=50$ մ $L=110$ մ պողպատե ջրագիծը ինչպես նաև $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:



1-ին ՕԿՁ-ի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Ալավերդի




Թումանյան փողոցի ջրամատակարարման սխեմա


● Թումանյան փողոցը ստող $D=150$ մ ջրագիծը անցնում էր երկաթուղու ճանապարհին զուգահեռ և բազմաթիվ շինությունների տակով: Այս հանգամանքը դժվարեցնում էր ջրագծի սպասարկումը և ջրակորուստների պատճառ դառնում: $L=700$ մ հատվածը շահագործումից հանելու նպատակով Թումանյան փողոցում կառուցվել է $D=110$ մ $L=700$ մ պոլիէթիլենային նոր ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում ինչպես $Q=3$ լ/վ ջրաքանակ, և վերացան կրկնվող վթարները:

Քաղաք Ստեփանավան

● Հետագա տարիների անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով Անտառային-Գերմանական փողոցների $D=90$ մ $L=182$ մ պողպատե վթարված ջրագիծերը փոխարինվել են $D=90$ մ $L=182$ մ պոլիէթիլենային ջրագծով, ինչի արդյունքում բարելավվել է վերը նշված փողոցների ջրամատակարարումը և ինչպես 1 լ/վ ջրաքանակ:



Անտառային-Գերմանական փողոցների ջրամատակարարման սխեմա



Ռուսթավելի փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ցանցում ջրի համապատասխան ճնշումն ապահովելու նպատակով Ռուսթավելի փողոցում կառուցվել է $D=110$ մ $L=20$ մ պոլիէթիլենային ջրագիծ և միացվել է Գ.Նժդեհ փողոցով անցնող $D=110$ մ ջրագծին:

Քաղաք Բերդ

● «Բայդուշի» ջրագծի վրա՝ անտառի մեջ, հայտնաբերված վթարը վերացնելու նպատակով փոխարինվել է $D=270$ մմ պողպատե ջրագծի հատվածը, որի արդյունքում խնայվել է $Q=1$ լ/վ ջրաքանակ:



«Բայդուշի» ջրագծի սխեմա

Քաղաք Եղեգնաձոր

● «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից ՊԿԱԾ ներդրումային ծրագրի շրջանակներում ջրագծերի փոխարինման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում: Լևոնյան փողոցում կառուցվել է $D=63$ մմ պոլիէթիլենային խողովակաշարով $L=138$ մ երկարությամբ ներքին ցանց, ինչպես նաև $D=20$ մմ $L=85$ մ անհատական տների մուտքագծեր:

Լայնածավալ և դժվարին աշխատանքներ են կատարվել նաև Մշեցու փողոցի և նրբանցքների ներքին ցանցի բարելավման նպատակով: Նշված տարածքի հողային ծածկը 5-6-րդ կարգի գրունտ էր, որի պատճառով նախկինում իրականացված ջրագծերի կառուցման ընթացքում չէր ապահովվել հողի սառեցման գոտին, որն էլ պատճառ էր հանդիսանում ջրագծերի սառեցման, ինչպես նաև հաճախադեպ վթարների առաջացման համար: Մշեցու փողոցում հիդրոմուրճի երկարատև աշխատանքից հետո կառուցվել է նոր ներքին ցանց և անհատական տների մուտքագծեր: Վերոնշյալ աշխատանքների ընթացքում օգտագործվել է $D=20-50$ մմ $L=228$ մ և $D=63-75$ մմ $L=574$ մ պոլիէթիլենային խողովակաշար:

Բոլոր բաժանորդների ջրաչափերը տեղափոխվել են սահմանագատման կետերում տեղադրված ջրաչափական հանգույցներ:

Կատարված աշխատանքների արդյունքում նշված փողոցներն ապահովվել են շարունակական ջրամատակարարմամբ, վերացվել են ջրակորուստները, խնայվել է մոտ 5-6 լ/վ ջրաքանակ:



Ուշի համայնք



● Համայնքում փոխարինվել է վթարված $D=50$ մմ $L=13$ մ պողպատե ջրագիծը՝ խնայելով $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:

Ուշի գյուղի ջրամատակարարման սխեմա

Թափրով համայնք

● Մայրաքաղաքային փողոցը հատող D=50մմ վթարված ջրագիծը շահագործումից հանելու նպատակով այն խցափակվել է, իսկ ջրագծից սնվող բաժանորդների փացումները կատարվել են նոր կառուցված d=40մմ պոլիէթիլենային խողովակից: Աշխատանքի արդյունքում խնայվել է Q=5լ/վ ջրաքանակ:



Թափրով գյուղի ջրամատակարարման սխեմա

Աշոցք համայնք



1-ին փողոցի ջրամատակարարման սխեմա

● 1-ին փողոցով անցնող D=50մմ L=20մ քայքայված ջրագիծը փոխարինվել է D=32մմ L=20մ պոլիէթիլենային ջրագծով, ինչի արդյունքում խնայվել է Q=1լ/վ ջրաքանակ:

● Զույգաղբյուրը սնուցող պոլիէթիլենային ջրագծի վրա ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է խցանում և այդ հատվածը փոխարինվել է D=200մմ պողպատե ջրագծով, ինչի շնորհիվ կարգավորվել է ջրամատակարարման ցածր ճնշումը:



Զույգաղբյուր համայնքի ջրամատակարարման սխեմա

Գեղաղիր համայնք




Գեղաղիր համայնքի ջրամատակարարման սխեմա

● Համայնքի D=150մմ քայքայված ջրագիծը փոխարինվել է նոր ջրագծով խնայելով Q=1լ/վ ջրաքանակ:

Լեռնապատ համայնք

● Լեռնապատ համայնքի Նոր գյուղի ջրամատակարարման ցանցը խորհրդային տարիներին է կառուցվել: Տեղի $D=50$ մմ և $D=219$ մմ քայքայված ջրագիծը պարբերական վթարների պատճառ էր դառնում: Ջրագծի հատվածները փոխարինելու արդյունքում խնայվել է $Q=1,5$ լ/վ ջրաքանակ և բարելավվել է համայնքի ջրամատակարարումը:



Լեռնապատի Նոր գյուղի ջրամատակարարման սխեմա

Այգեկ համայնք



Այգեկ գյուղի ջրամատակարարման սխեմա

● Գյուղում դպրոցի դիմաց կառուցվել է $D=32$ մմ $L=250$ մ պոլիէթիլենային նոր ջրագիծ նախկինում գործող վթարված $D=100$ մմ պողպատե ջրագծի փոխարեն:

Գոգհովիտ համայնք

● 3-րդ փողոցով անցնող $D=80$ մմ $L=250$ մ վթարված պողպատե ջրագիծը խցափակումով շահագործումից դուրս է բերվել: Աշխատանքի արդյունքում խնայվել է $Q=0,5$ լ/վ ջրաքանակ:



3-րդ փողոցի ջրամատակարարման սխեմա

Մրգաշատ համայնք

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Մրգաշատ համայնքի 1-ին փողոցում: Նախկին՝ $D=100$ մմ խիստ վթարային վիճակում գտնվող պողպատե ջրագծի $L=400$ մ հատվածը փոխարինվել է $D=75$ մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով: Թվով 14 բաժանորդների ջրաչափական դիտահորերը սեփականություն հանդիսացող տարածքից դուրս կբերվեն և քայքայված պողպատե մուտքագծերը կփոխարինվեն մետաղապլաստե խողովակներով, որից հետո կիրականացվեն նշված բաժանորդների մուտքագծերի միացման աշխատանքները:

Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև նշված փողոցի 1-ին փակուղում: $D=50$ մմ $L=110$ մ խիստ վթարային ջրագիծը փոխարինվել է $D=75$ մմ $L=50$ մ, և $D=50$ մմ $L=60$ մ պոլիէթիլենային նոր խողովակներով:

Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծերի շահագործման հուսալիությունը, կանխվել են հնարավոր վթարները:

● Ներդրումային ծրագրի շրջանակներում ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Մրգաշատ համայնքի 8-րդ փողոցի 2-րդ նրբանցքում: $D=80$ մմ վթարային ջրագծի $L=340$ մ հատվածը փոխարինվել է նոր $D=50$ մմ պոլիէթիլենային խողովակաշարով: Թվով 7 բաժանորդների տրվել է ժամանակ՝ ջրաչափական դիտահորերը սեփականություն հանդիսացող տարածքից դուրս բերելու և շարքից դուրս եկած պողպատե մուտքագծերը մետաղապլաստե խողովակներով փոխարինելու համար, որից հետո կիրականացվեն նշված բաժանորդների մուտքագծերի միացման աշխատանքները: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կանխվել են հնարավոր վթարները:



Ակնալիճ համայնք

● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև Ակնալիճ համայնքում: Շահումյան փողոցը սնող $D=100$ մմ $L=150$ մ վթարային ջրագիծը փոխարինվել է $D=75$ մմ $L=150$ մ պոլիէթիլենային նոր խողովակով: Թվով 5 բաժանորդների (որոնց ջրաչափական դիտահորերը գտնվել են սեփականություն հանդիսացող տարածքից դուրս) շարքից դուրս եկած պողպատե մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե նոր խողովակներով:

Կատարված աշխատանքների արդյունքում կանխվել են հնարավոր վթարները, ապահովվել է ջրագծից սնվող բաժանորդների շարունակական ջրամատակարարումը:



Մարմարաշեն համայնք



● Մարմարաշեն համայնքում իրականացված վթարառոտնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և վերացվել է թվով 1 վթար, ինչպիսիք է մոտ 1 լ/վ ջրաքանակ:

Դալարիկ համայնք



● Ջրագծի փոխարինման աշխատանքներ են կատարվել Դալարիկ համայնքի Երիտասարդական փողոցում: Նախկին՝ D=50մմ վթարային վիճակում գտնվող պողպատե ջրագծի L=370մ հատվածը փախարինվել է D=63մմ պոլիէթիլենային նոր խողովակաշարով: Թվով 12 բաժանորդների ջրաչափական դիտահորերը դուրս են բերվել բաժանորդների սեփականություն հանդիսացող տարածքներից, բոլոր բաժանորդների՝ ամբողջությամբ քայքայված պողպատյա մուտքագծերը փոխարինվել են մետաղապլաստե նոր խողովակներով:

● Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ փողոցն ապահովվել է շարունակական ջրամատակարարմամբ, կանխվել են հնարավոր վթարները, կրճատվել են շահագործման ծախսերը:

Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

Կատարված աշխատանքները	Չափման միավորը	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1303
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	25640
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	11620
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2700
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	12
Շահագործումից հանված ջրագիծ	մ	18797
Կառուցված ջրագիծ	մ	5451.9
Կառուցված կոյուղագիծ	մ	274.4
Վերացված գաղտնի վթարներ	հատ	35
Փոխարինված փական	հատ	274
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	408
Մաքրված դիտահոր	հատ	3910
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	173.38
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	2133
Ջրահեռացման ցանցում	հատ	3989
Պոմպակայաններում	հատ	131
Մաքրված անձրևընդունիչ	հատ	802

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	2	58	0
2	Զեյթուն	2	42	0
3	Մաշտոց	1	51	0
4	Շահումյան	3	67	0
5	Ալավերդի	26	13	0
6	Բերդ	10	5	0
7	Նոյեմբերյան	19	17	0
8	Իջևան	14	15	0
9	Ստեփանավան	12	32	0
10	Տաշիր	20	1	0
11	Ապարան	6	14	0
12	Լոռի, Վանաձոր	68	55	0
13	Շիրակ	61	122	0
14	Արթիկ	33	23	0
15	Սպիտակ	6	24	0
16	Թալին	6	8	0
17	Աշոցք	6	15	0
18	Էջմիածին	12	52	0
19	Աշտարակ	11	12	0
20	Հրազդան	11	2	0
21	Չարենցավան	22	24	0
22	Աբովյան	2	7	0
23	Կենտրոն	4	55	12
24	Հյուսիս	0	37	44
25	Հարավ	5	171	5
26	Էրեբունի	17	144	11
27	Արմավիր	8	95	11
28	Արտաշատ	60	56	23
29	Արարատ	21	62	21
30	Մասիս	30	47	35
31	Գավառ	36	15	36
32	Սևան	11	16	46
33	Մարտունի	2	18	0
34	Վարդենիս	0	9	2
35	Ճամբարակ	0	1	1
36	Դիլիջան	12	26	20
37	Վայք	5	6	16
38	Եղեգնաձոր	21	0	14
39	Զերմուկ	0	12	0
40	Սիսիան	18	15	12
41	Գորիս	13	15	16
42	Կապան	23	27	16
43	Մեղրի	7	1	4
	Ընդամենը	646	1487	345




1.3. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել տարբեր տրամաչափի ջրաչափեր:

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	147	45	20	5	1	4	1	0	1	224
Փոխարինված	6	12	2	3	1	3	0	1	0	28
Տեղափոխված	23	0	0	0	0	0	1	0	0	24
Տեխ. Ակտ	74	50	1	2	0	4	1	0	0	132
Ընդամենը	250	107	23	10	2	11	3	1	1	408

1.4. Ջրահեռացման համակարգ

Քաղաք Երևան



- «Էրեբունի» տեղամասի կողմից իրականացվել են քայքայված և հետագա շահագործման համար ոչ պիտանի կոյուղագծերի փոխարինման աշխատանքներ: Նոր Արեշ 29 փողոցում նախկին D=200մմ քայքայված կերամիկական կոյուղագծի L=24մ հատվածը փոխարինվել է նոր D=200մմ, իսկ L=3մ հատվածը D=150մմ պոլիէթիլենային խողովակաշարերով: Նույն հատվածում իրականացվել են նաև թվով 2 դիտահորերի վերանորոգման աշխատանքներ:

- Կոյուղագծի փոխարինման աշխատանքներ են իրականացվել նաև Աթոյան անցուղի 11 շենքի մոտ: Վթարային կոյուղագծի L=12մ հատվածը փոխարինվել է նոր D=200մմ, իսկ L=6մ հատվածը D=150մմ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակաշարով, ինչպես նաև իրականացվել է թվով 1 երկաթբետոնե դիտահորի ծածկի բարձրացում:

- Հաճախակի խցանումներ ու վթարներ էին առաջանում նաև Խաղաղ Դոն 31 շենքին հարող տարածքում: Խնդրի կարգավորման նպատակով փոխարինվել է D=200մմ, L=13մ կոյուղագիծ:

Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է կոյուղատար համակարգի շահագործման հուսալիությունը, կանխվել են հնարավոր վթարները և բաժանորդների դժգոհությունները:

Քաղաք Վարդենիս

- Լեռնագործների 17 բազմաբնակարան շենքը դեռևս խորհրդային տարիներից չունի կոյուղու միացում կենտրոնական կոյուղու համակարգին: Կոյուղաջրերը խողովակաշարով լցվում էին շենքի հարակից տարացքում գտնվող ջրափոսը, որն առաջացնում էր հակահիգիենիկ և հակասանիտարական վիճակ: Խնդրի կարգավորման նպատակով «Վարդենիս» տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել է ուսումնասիրություն, և հարցին տրվել է ինժեներական լուծում: Վերականգնվել է հարակից նախկին տպարանի տարածքով անցնող չշահագործվող D=200մմ թուջե կոյուղատար խողովակը, պպա իրականացվել է խողովակաշարի և դիտահորերի վնասում և մաքրում: Տեղադրվել է դիտահոր, և ցանցը միացվել է D=300մմ պոլիէթիլենային կենտրոնական կոյուղատար համակարգին:



● Անբարեկարգ վիճակում էր գտնվում նաև Վարդենիս քաղաքի կենտրոնում գտնվող Երևանյան փողոցի կոյուղատար համակարգը: Կոյուղագծի մի հատվածը գրեթե ամբողջովին փակված էր, իսկ մյուս հատվածի գերծանրաբեռնվածությունը հաճախ հանգեցնում էր խցանումների:


Կոյուղագծի բնականոն աշխատանքը վերականգնելու նպատակով «Վարդենիս» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է տեխնիկական միջամտություն՝ նախկին խողովակաշարի մաքրում և լվացում: Տեղադրվել է 2 նոր դիտահոր, և շրջանցման միջոցով կատարվել է միացում D=250մմ կենտրոնական կոյուղատար համակարգին:

● Խ. Ստեփանյան 15 հասցեում փոխարինվել է նախկին փլուզված կոյուղու դիտահորը:

● Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ փողոցների հարակից տարածքներն ունեցան բարեկարգված, հետագա շահագործման համար հուսալի, տեխնիկական ու սանիտարական չափանիշներին համապատասխանող կոյուղատար համակարգ:

Հոկտեմբեր ամսվա ընթացքում Տարածաշրջանների տնօրինությունների կողմից ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև աղյուսակում.

<i>Աշխատանքների հակիրճ նկարագիրը</i>				
<i>h/h</i>	<i>Տեղամասի անվանումը</i>	<i>Կոյուղագծերի լվացում</i>	<i>Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում</i>	<i>Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում</i>
		<i>մ</i>	<i>հատ</i>	<i>հատ</i>
1	Արաբկիր	600	197	30
2	Մաշտոց	1357	212	24
3	Շահումյան	1905	161	10
4	Զեյթուն	330	184	18
5	Շիրակ	600	479	11
6	Իջևան	1085	34	-
7	Ալավերդի	1080	69	-
8	Ապարան	-	28	-
9	Աշոցք	-	14	2.4
10	Սպիտակ	100	24	-
11	Բերդ	180	18	-
12	Ստեփանավան	1415	18	-
13	Արթիկ	-	82	-
14	Լոռի	1862	172	29
15	Նոյեմբերյան	-	18	3
16	Տաշիր	230	6	6
17	Թալին	-	9	-
18	Էջմիածին	-	96	-
19	Չարենցավան	1445	55	-
20	Արմվյան	1600	63	-
21	Հրազդան	1450	82	-
22	Աշտարակ	2060	22	-
23	Կենտրոն	930	340	36
24	Հյուսիս	3780	221	4
25	Հարավ	700	388	6
26	Էրեբունի	2750	198	95
27	Արմավիր	3360	121	-
28	Արտաշատ	2180	81	-
29	Արարատ	2681	68	-
30	Մասիս	1329	49	-
31	Գավառ	550	28	-
32	Սևան	3750	56	-
33	Մարտունի	0	22	-
34	Վարդենիս	0	12	-
35	Ճամբարակ	80	18	-
36	Դիլիջան	210	49	-
37	Վայք	480	11	-
38	Եղեգնաձոր	120	11	-
39	Զեյթուն	0	26	-
40	Սիսիան	0	104	-
41	Գորիս	0	26	-
42	Կապան	825	83	-
43	Մեղրի	0	34	-
	Ընդամենը	41024	3989	274.4



1.5. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Գավառ և Մարտունի ԿՄԿ-ներում սարքավորումների գննման և կարգաբերման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ վերը նշված կայանների ավագ տեղափոխող կոնվեյերների պաշտպանիչ պոլիէթիլեն շերտերը մաշվել են: Ընթացիկ ամսում դրանք փոխարինվել են նորով և այժմ աշխատում են անխափան: Կատարվել է նաև քերիչ սանրերի կարգաբերում:

- Մարտունի ԿՄԿ-ի օդամղիչը մեծ աղմուկ էր առաջացնում, որի պատճառն առանցքակալն էր, ինչն էլ փոխարինվեց նորով:

- Վարդենիս ԿՊ-ում վերանորոգվել և տեղադրվել է հոսանքի տատանումների պատճառով այրված պոմպը: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվել և մաքրվել են:


- Ջերմուկ ԿՄԿ-ում և ԿՊ-ում կատարվել է պրոֆիլակտիկ գննում, ստուգվել են բոլոր սարքավորումները, էլեկտրական հանգույցները, որի արդյունքում փոխարինվել են արտադրական մասնաշենքի լուսավորության և օդափոխության ավտոմատ անջատիչները:

- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աշխատանքների հակիրճ նկարագիրը

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	55 866	10.8
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	73 651	10.8
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	237 643	7.2
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	137 301	9.5
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	128 390	9
6	Ք. Սևան	«Սևանի» N:3 պ/կ	19 679	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N:5 պ/կ	10225	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	7 900	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	30 100	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	6189	-	-




1.6. Էներգոհամակարգ

Հաշվետու ժամանակահատվածում Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակում.

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Մամիկոնյանց 23/1 - 53	Էլ. սարքերի գննում կարգավորում, (2h շարժիչի վերանորոգում)
2	Կոմիտասի 14 - 38	պոմպի աշխատանքի գննում կարգավորում, (2h առանցքակալ, 2բանվորական անիվ, 1 վերանորոգման հավաքածու)
3	Սունդուկյան 7	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h բարձր ճնշման ռելե, 1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h ցածր ճնշման ռելե)
4	Բարբյուսի 63 - 19	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Բարբյուս 63	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h բարձր ճնշման ռելե, 1h թողարկիչ)
6	Վ. Վաղարշյան 24/2 - 39	Պոմպի աշխատանքի կարգավորում
7	Աղբյուր Սերոբ 11/2	Պոմպի աշխատանքի կարգավորում
8	Հ.Էմինի 82 - 23	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h բարձր ճնշման ռելե, 1h ցածր ճնշման ռելե)
9	Վ. Վաղարշյանի 1 - 30	Պոմպի աշխատանքի կարգավորում
10	Սունդուկյանի 3 - 30	Էլ. սարքերի գննում և կարգավորում
11	Ավետ Ավետիսյանի 74 - 58	Էլ. սարքերի գննում և կարգավորում
12	Կոմիտաս 50 - 22	Պոմպի աշխատանքի կարգավորում
13	Կոմիտաս 50-24	Էլ. սարքերի գննում և կարգավորում
14	Սունդուկյան 12	Էլ. սարքերի գննում և կարգավորում
15	Կոմիտաս 48/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
16	Կոմիտաս 12 - 80	Էլ. սարքերի գննում և կարգավորում
17	Գյուլբենկյանի 34/1 - 38	Պոմպի աշխատանքի կարգավորում
18	Սունդուկյան 12	Պոմպի աշխատանքի կարգավորում
19	Սունդուկյան 32	Պոմպի աշխատանքի կարգավորում
20	Փափագյան 16/բ	Պոմպի աշխատանքի կարգավորում
21	Քանաքեռ ներքին ՕԿՁ	Էլ. սարքերի գննում կարգավորում, (էլ.մալուխի վերանորոգում)
22	Վրացական 4նրբ	Պոմպի աշխատանքի կարգավորում
23	Խաչատրյան 262	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Օրբելի 8	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1հատ ավտոմատիկայի կառավարիչ)
25	Կոմիտասի 50 - 10	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, պոմպի վերանորոգում 1 հատ, փականի տեղադրում տր=25 մմ, 1 հատ, (1հատ ժամանակի ռելե,)
26	Սունդուկյանի 1	Էլ. սարքերի գննում և կարգավորում
27	Խաչատրյան 232	Էլ. սարքերի գննում և կարգավորում
28	Սունդուկյանի 3 - 21	Էլ. սարքերի գննում և կարգավորում
29	Սունդուկյան 3 2	Էլ. սարքերի գննում և կարգավորում
30	Գյուլբենկյան 43	պոմպի վերանորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (ռետինե խողովակը փոխարինելով)
31	Խաչատրյան 6	Էլ. սարքերի գննում կարգավորում, (էլ. հաշվիչի փոխարինում)
32	Քանաքեռ ՇԷԿ	Պոմպի աշխատանքի կարգավորում
33	Գյուլբենկյան 19/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
34	Գյուլբենկյան 46	Էլ. սարքերի գննում և կարգավորում
35	Սունդուկյան 3 - 11	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1h առանցքակալ, փասսված դետալների վերանորոգում)
36	Թբիլիսյան խճ. 35 /հոսքաչափ/	Էլ. սարքերի գննում և կարգավորում
37	Աղ. Սերոբ 10	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, (շարժիչի վերանորոգում, 1h լիսեռ, 1h վերանորոգման հավաքածու)

h/h	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
38	Կոմիտաս 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
39	Համբարձումյան 97 - 28	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1 հետադարձ փական)
40	Օրբելի 63	Պոմպի աշխատանքի կարգավորում
41	Ահարոնյան 7	Պոմպի աշխատանքի կարգավորում
42	Թբիլիսյան խճ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
43	Մամիկոնյանց 23/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
44	Մամիկոնյանց 23/1	Էլ. սարքերի գննում կարգավորում, պոմպի վերանորոգում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (2առանցքակալի, 1վերանորոգման հավաքածուի,)
45	Կոմիտաս 14	Պոմպի աշխատանքի կարգավորում
46	Վաղարշյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
47	Մունդուկյան 4 - 54	Պոմպի աշխատանքի կարգավորում
48	Տիգրանյան 5/1	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, փականի նորոգում տր=40 մմ, 2 հատ
49	Թբիլիսյան խճ. 1,2	Պոմպի աշխատանքի կարգավորում
50	Ուլնեցի 49	բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1h խցուկ)
51	Մուրենյանց 4	Պոմպի աշխատանքի կարգավորում
52	Զեյթուն 8-րդ փ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
53	Բաշինջաղյան 1նրբ1շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
54	16թաղ Աշտարակի խճ	Էլ. սարքերի գննում կարգավորում, (հոսքաչափի էլ. մալուխի վերանորոգում)
55	Շինարարների 15/1 շենք	Պոմպի աշխատանքի կարգավորում
56	Շինարարների 10/1 - 132	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1շ թողարկիչ, 1h լիսեռ)
57	Աբելյան 17 - 97	Պոմպի աշխատանքի կարգավորում
58	գ.Պոռչյան	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h կոնդեսատոր, 1h առանցքակալ, շարժիչի վերանորոգում)
59	Շինարարներ10/1 - 59	պոմպի աշխատանքի գննում կարգավորում, (1h մեմբրան 500լ)
60	Շինարարների 15/1	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
61	Միլիկյան թաղ.	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, (1խծուկ, 1 ֆիլտր)
62	մ. Կոտայք գ. Ակունք	Էլ. սարքերի գննում և կարգավորում
63	մ. Կոտայք ք. Աբովյան Գեղարդի 5	Պոմպի աշխատանքի կարգավորում
64	մ. Կոտայք. Սոլակ	պոմպի վերանորոգում 1 հատ, (բանվորական անիվի նորոգում)
65	մ. Արմավիր ք. Էջմիածին Շահումյան 46, 48, 50	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h մանոմետր, 2h ցածր ճնշման ռելե, 2թողարկիչ, 1h ավտոմատիկայի կառավարիչ)
66	մ. Արմավիր գ. Այգեկ	Էլ. սարքերի գննում կարգավորում, (Էլ. հաշվիչի տեղադրում)
67	մ. Արմավիր ք. Էջմիածին Վաղարշապատ պոմպակայան	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h ֆազի բացակայության ռելե)
68	մ. Արմավիր Մերձավան	Էլ. սարքերի գննում կարգավորում, (Էլ. հաշվիչի տեղադրում)
69	Սվաճյան 20-19	Էլ. սարքերի գննում կարգավորում, (1h թողարկիչ, 1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h ֆազի բացակայության ռելե)
70	մ. Արմավիր Մերձավան	Էլ. սարքերի գննում և կարգավորում
71	Սեբաստիա 30 - 32	փականի տեղադրում տր=0 մմ, 1 հատ, (1h եռաֆազ թողարկիչ)
72	Ա3 թաղ. 40շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
73	գ. Թախրով / հոսքաչափ/	Էլ. սարքերի գննում և կարգավորում
74	Սեբաստա 141	Էլ. սարքերի գննում և կարգավորում
75	Գյումրի 26 Կոմիսարների 49 տ	Էլ. սարքերի գննում և կարգավորում
76	Հասցե	Կատարված աշխատանքի նկարագրությունը
77	Գ. Նժդեհի 8	Պոմպակայանում ջրագծի վթարի կանխում և պ/կ լցված ջրերի հեռացում
78	Արարատյան ՕԿՁ	Չոր խցից օպերատորների սենյակ գնացող գնացված էլՄ մալուխի փոխարինում 80 գծ/մ 1 x 10 այլումինե մալուխով
79	Տեղյան 56	Պոմպակայանը սնող գնացված մալուխի փոխարինում 70 գծ/մ 4x6 այլումինե հաղորդալարով
80	Ծիծեռնակաբերդի ՕԿՁ	Արտաքին լուսավորության կարգավորում
81	Մաշտոցի 18	Պոմպակայանը սնող գնացված մալուխի փոխարինում 50 գծ/մ 4x6 այլումինե հաղորդալարով
82	Նոր Արեշ 15/9	Պոմպակայանը սնող գնացված մալուխի փոխարինում 60 գծ/մ 4x6 այլումինե հաղորդալարով
83	Հովհաննիսյան 119	Էլ. սխեմայի կարգավորում



1.7. Մեքենա-մեխանիզմներ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հոկտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենաների շարժիչներ՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:


Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Թվով 11 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով: Թվով 40 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ:

Նորոգվել է թվով 3 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները: Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկներ, մանեկներ, սատելիտներ:

Թվով 6 մեքենաների վրա փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկներ: Թվով 2 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ: Թվով 6 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսակետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 184, իսկ ՄՏՍՏ-ում 132 պայմանագրային աշխատակիցներ: 01.11.2018թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 242.950, իսկ ՄՏՍՏ-ում 181.354 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	358.194	233.635	65.2
		Իրավաբանական անձ	16.773	9.315	55.5
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	251.805	174.701	69.4
		Իրավաբանական անձ	9.834	6.653	67,7
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	609.999	408.336	66.9
		Իրավաբանական անձ	26.607	15.968	60.0

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հոկտեմբեր ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	396.886	307.070	77,4
		Իրավաբանական անձ	20.006	14.450	72,2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	313.858	202.395	64,5
		Իրավաբանական անձ	12.237	7.884	64,4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	710.744	509.465	71,7
		Իրավաբանական անձ	32.243	22.334	69,3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 277 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 310 նոր բաժանորդ:

2.2. Հասույթ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ, ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հատուկ դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:


Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 722, իսկ ՄՏՍՏ-ում՝ 719 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	10.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	630	330	223	77
2		Իրավաբանական անձ Ընդամենը	92	29	51	12
			722	359	274	89
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	662	319	241	102
2		Իրավաբանական անձ Ընդամենը	57	35	15	7
			719	354	265	109

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում, լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 199.906 մ³ վերահաշվարկված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ (Երևան)




Հասույթ (Մարզեր)




2018թ. հունվար-հոկտեմբեր ամիսների սպառման ծավալները համեմատած նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ ավելացել են մոտ 763.0 հազ.լսմ (կամ մոտ 2%): Միաժամանակ պետք է նշել, որ արտադրական հզորությունների նվազման պատճառով խոշոր սպառողների սպառման ծավալները նվազում են.

Եղեգնաձորի պահածոների գործարան (լսմ)



Թեղուտի ՊՄ կոմբինատ (լսմ)




2018թ. հոկտեմբեր ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ³	Փաստացի հազ.մ³	Տարբերություն %, հազ.մ³
Երևան	Հոկտեմբեր	7.345	7.432	1,19
Մարզեր		3.798	3.423	-9,88
Ընդամենը		11.143	10.855	-2,58

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձում

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հոկտեմբեր ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1.317,6 մլն.դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 594,1 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	1.164.996	1.256.334
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	1.171.895	1.173.069
	%	70.66	83.58	99.02	88.04	100.59	93.37
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	443.557	481.998
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	520.132	501.615
	%	83.26	94.11	117.94	102.54	117.26	104.07
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	1.608.553	1.738.332
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	1.692.027	1.674.685
	%	74.41	86.67	104.13	92.36	105.19	96.34

Տարածաշրջան	Գանձում	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.271.520	1.428.482	1.447.844	1.384.746	12.452.824
	Հավաքագրում	1.194.706	1.401.559	1.284.149	1.317.617	11.377.587
	%	93.96	98.12	88.69	95.15	91,37
Մարզեր	Առաջադրանք	481.998	621.594	585.570	595.888	5.047.149
	Հավաքագրում	507.621	618.309	535.951	594.117	5.091.648
	%	105.32	99.47	91.53	99,70	100,88
Ընդամենը	Առաջադրանք	1.753.518	2.050.076	2.033.414	1.980.634	17.499.973
	Հավաքագրում	1.702.327	2.019.869	1.820.100	1.911.735	16.469.235
	%	97.08	98.53	89.51	96.52	94,11

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հոկտեմբեր ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 134 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 12.32 մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 63 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 3.51 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
2300	451192081	1601	190065959	38	7162804	2182	300440431	853	72463929

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.11.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3.136,7	1.387,8
Բնակիչ-բաժանորդներ	2.087,1	879,9
Իրավաբանական անձեր	1.049,5	507,9
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2.162,8	600,2
Բնակիչ-բաժանորդներ	1.756,5	441,8
Իրավաբանական անձեր	406,3	158,3
Ընդամենը, այդ թվում	5.299,5	1.988,0
Բնակիչ-բաժանորդներ	3.843,6	1.321,7
Իրավաբանական անձեր	1.455,8	666,2


Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Միաժամանակ ՄՏՍՏ մասով դեբիտորական պարտքերի մեջ ներառված են 01.11.2018թ. դրությամբ հանրապետական բյուջեից չվճարված մոտ 15.0 մլն. դրամ պարտքը, որը նախատեսվում է վճարել հաջորդ ամիսների ընթացքում:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 133.2մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)





2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.11.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	387.707	305.221	78,72	19.483	14.446	74,15
	Առանց ջրաչափի	9.179	1.849	20,14	523	4	0,76
Մարզեր	Ջրաչափով	284.863	196.730	69,06	11.835	7,879	66,57
	Առանց ջրաչափի	28.995	5.665	19,54	402	5	1,24
Ընդամենը	Ջրաչափով	672.570	501.951	74,63	31.318	22.325	71,28
	Առանց ջրաչափի	38.174	7.514	19,68	925	9	0,97

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.11.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	513.235	273.428	53,28	22.188	4.225	19,04
Մարզեր	331.811	83.559	25,18	13.956	1.802	12,91
Ընդամենը	845.046	356.987	42,24	36.144	6.027	16,67

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 1204, իսկ Մարզերում 1495 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 53 իսկ ՄՍՍՍ սպասարկման տարածքում՝ 276 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

<i>Հասցե</i>	<i>Ջրաչափերի ընդանուր քանակը</i>	<i>Փոխարինված ջրաչափերի քանակը</i>	<i>%</i>
Շերամի	6078	4825	79.4
Սվաճյան	1461	1198	82.0
Օհանովի	1688	1276	75.6
Զ.Անդրանիկ	1750	867	49.5
Ա.Բարաջանյան	7068	3525	49.9
Իսակովի	231	59	25.5
Զրվեժ Մայակ թաղ.	1891	1459	77.2
Զրվեժ Բանավան	1400	1131	80.8
5-րդ զանգված	6505	3681	56.6
7-րդ զանգված	4683	3117	66.6
8-րդ զանգված	4061	2303	56.7
ԸՆԴԱՄԵՆԸ	36816	23441	63.7

«Լոռի» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր: Հոկտեմբեր ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 9 հասցեներում, որտեղ առկա 2.892 ջրաչափից փոխարինվել է 1.927 ջրաչափ (մոտ 66.6%):

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

<i>Հասցե</i>	<i>Ջրաչափերի ընդանուր քանակը</i>	<i>Տեղադրված ջրաչափերի քանակը</i>	<i>%</i>
Ք.Վանաձոր, Իսահակյան	663	457	68.9
Ք.Վանաձոր, Իսահակյան 1 նրբ.	243	186	76.5
Ք.Վանաձոր, Իսահակյան 2 նրբ.	116	84	72.4
Ք.Վանաձոր, Ավետիսյան	120	56	46.7
Ք.Վանաձոր, Աղայան	507	420	82.8
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	162	107	66.0
Ք.Վանաձոր, Շինարարների	348	250	71.8
Ք.Վանաձոր, Ուսանողական	303	182	60.1
Գ.Գուգարք	430	185	43.0
ԸՆԴԱՄԵՆԸ	2,892	1,927	66.6


«Լոռի» տեղամասի սպասարկման տարածքում, տարբեր հասցեներում տեղադրվել են նաև 855, իսկ «Շիրակ» տեղամասի սպասարկման տարածքում ` 1000 ջրաչափական սարք:

2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրաձախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

<i>Տարածաշրջան</i>	<i>Քանակ</i>	<i>Խ.մ.</i>	<i>Գումար (դրամ)</i>
Երևան	130	136.486	24.391.671
Մարզեր	129	51.967	8.788.944
Ընդամենը	259	188.453	33.180.615



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ








3.1. Ջրամատակարարման շարունակականություն







Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի հոկտեմբեր ամսվա շարունակականության տվյալները՝ 98.3%, որոնք 0.5%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Հաշվետու ամսում սկսել է գործել Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված «Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը:


Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)



Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 42 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 18-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.








3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 2198Կվտ/ժ (0.45%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 181 հասցե: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայություններին թերությունները վերացնելու նպատակով: Եվս 1 հասցեում ապամոնտաժվել է լարանցում, որի հետագիծը հնարավոր չի եղել պարզել:


Ստորև ներկայացված են հոկտեմբեր ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Արմավիր , Իրացման տեղամաս Երևան , Արցախի 28	հավելագրում	1492
Երևան , Ծախսաչափ(Մառի 18)	Լարանցում հետագիծը անհայտ ապամոնտաժված	400
Երևան , Մելիքյան ջրամբար Ընդամենը	հավելագրում	1000 3475

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ.էներգիայի ծախսը նվազել է 12733կՎտ/ժ կամ 34% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 5099կՎտ/ժ կամ 13% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 356.169կՎտ/ժամ (53.33%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում կանխատեսվող էլ.էներգիայի ծախսը նվազել է ամսական 47550ԿՎտ/ժամ (2.06%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը ավելացել է ամսական 266.564կՎտ/ժ (6.54%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա



3.3. Աշխարհագրական տեղեկատվական Համակարգ


Շահագործման տեղամասերի ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:

- Կատարվել է մոտ 7059,18մ երկարությամբ ջրագծերի թարմացում՝ լրացուցիչ տեղեկությունների հիման վրա:
- ԱՏՀ համակարգով կատարվել է Արաբկիր վարչական շրջանի կոյուղագծերի փոփոխություններ:
- Կատարվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքների վերաբերյալ բազայի լրացում և թարմացում (առկա կոյուղագծեր, փականներ, դիտահորեր, ՕԿՁ-ներ), AutoCAD ծրագրային ձևաչափից անցում ԱՏ համակարգի տվյալների բազայի:
- Տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ «Ինտերակտիվ» համակարգում ներառված իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքերի ճշտում: Այնուհետև հավաքագրված տեղեկատվությունը ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով: 110 ֆիզիկական և 53 իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևան քաղաքում, 45 իրավաբանական և 110 ֆիզիկական բաժանորդների ավելացում տվյալների բազա:
- «ՄԵԾ ՄԱՍՐԵՆԻ» ՄՊԸ-ի կողմից նախկինում կատարված աշխատանքների տվյալների հիման վրա, «Հայքմուղկոյուղի» ՓԲԸ նախկին սպասարկման տարածքի ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում՝ ճիշտ աշխարհագրական դիրքերով, GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:
- Աշտարակ քաղաքում և Դպրևան, Շամիրամ, Ուջան, Զիթանքով, Ֆանտան գյուղերում կատարված շինարարական նախագծերի արդյունքում ստացված կատարողականների տվյալների մուտքագրում բազա GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:
- «Գառնի-Երասխ-Լանջազատ» ջրատարի քարտեզի սպառում և տրամադրում՝ ըստ պահանջի:
- ՀՀ առկա ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, տվյալների բազայի ստեղծում:


3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է «Վեդիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մասցորդային քլորի համապատասխանությունը սահմանված չափաբաժնին:

● «LOCATOR» ծրագրից ստացված տվյալներից պարզվել է, որ «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Աբովյան պուրակ» ՕԿԶ-ի էլքերից «տրանզիտ» ուղղությամբ հոսող ջրաքանակը կտրուկ ավելացել է 17լ/վ-ից հասնելով 135լ/վ-ի: Այդ մասին տեղեկացվել են «Կենտրոն» տեղամասի համապատասխան աշխատակիցները, որոնց կողմից ճշգրտվել է վթարի ստույգ վայրը, որից հետո հայտարարվել է վթարային ջրանջատում: Փակվել է «Աբովյան պուրակ» ՕԿԶ-ից դեպի «տրանզիտ» ուղղություն հոսող ջրաքանակը: Կատարվել է ջրատարի գոդում, և արդյունքում վերականգնվել է բնականոն շուրջօրյա ջրամատակարարումը: Ստորև ներկայացված է դեպի վթարված ուղղությամբ հոսող ջրաչափի գրաֆիկական պատկերը:




● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Աբովյան պուրակ» ՕԿԶ-ից դեպի Խանջյան փողոց հոսող ջրատարի վրա տեղադրված ճնշման կարգավորիչ փականը խափանվել էր: Դա պարզվել էր այն ժամանակ, երբ տվյալ ջրատարի վրա տեղադրված ջրաչափի ցուցմունքը կտրուկ ավելացել էր: Այդ մասին տեղեկացվել են «Կենտրոն» տեղամասի պատասխանատուները, որոնց կողմից պարզվել էր խնդրի իսկությունը: Ընշման կարգավորիչ փականը կարգավորելուց հետո հոսող ջրաքանակը կարգավորվել է: Ստորև ներկայացված է Խանջյան փողոցի ջրաչափի գրաֆիկական պատկերը:



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**





4.1. Համակարգչային ցանց


- Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝
- Ներդրվել է գաղտնաբառերի կառավարման և անվտանգ պահպանման «LastPass» ծրագրային լուծումը:
 - Գործարկվել է նոր բիլինգային համակարգի փորձնական «Linux» օպերացիոն համակարգով աշխատող սերվերները՝ համակարգի թեստավորման և ներդրման համար անհրաժեշտ գործողությունների իրականացման համար:
 - Դադարեցվել է «yerevandjur.am» դոմենի գործածումը Էլեկտրոնային նամակագրության համար: Բոլոր օգտագործողները տեղափոխվել են «vjur.am» դոմենով կիրառվող Էլեկտրոնային նամակագրության համակարգին:
 - Անցկացվել է ներքին IT աուդիտ Վեոլիա Խմբի գլխավոր գրասենյակի կողմից:
 - Կազմվել և ներկայացվել է 2019 թվականին նախատեսված IT ծրագրերի և նախագծերի ցանկը՝ ըստ Վարձակալության պայմանագրի տարեկան հաշվետվությունների նախատեսված պայմանների՝ «Բիզնես պլան» կազմելու և Վարձատուին տրամադրելու նպատակով:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ «Ինտերակտիվ» և «Փաստաթղթաշրջանառության» համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության և մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում են տվյալներ, շարունակականության ծրագրի համար:
- Մի շարք թարմացումներ և լրացումներ են կատարվել «Ինտերակտիվ» համակարգի «դեմո» տարբերակի վրա, որպիսի հնարավոր լինի աշխատացնել այդ համակարգը ուսումնական նկատառումներով՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ և «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՌ կումիտեին, ՀՕԿՀ և ընկերության այլ ստորաբաժանումներին:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Հոկտեմբեր ամսվա ընթացքում կատարվել է զգալի գործ «Վեոլիա Ջուր» Հնկերության աշխատանքը հանրությանը, ինչպես նաև «Վեոլիա Գրուպ»-ին ներկայացնելու համար:



Վեոլիա Ջրի գործընկեր «Deem Communication» ընկերության միջոցով պատրաստվել է տեսաֆիլմ համակարգում մեկնարկած կադրերի վերապատրաստման ծրագրի մասին «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» Հիմնադրամի օգնությամբ: Եվս մեկ տեսաֆիլմ պատրաստվել է արդեն «Ֆորմիկա Արտ» ընկերության միջոցով 2 օրվա ընթացքում աշխատանքային արտակարգ ռեժիսի պայմաններում, Վեոլիա Գրուպի ընկերությունների Բուդապեշտում կայացված աշխատաժողովի ժամանակ:



Ամիսը հարուստ է եղել հատկապես հանրության համար ամենամատչելի և ազդեցիկ հեռուստահաղորդումներով: Այսպես, պատրաստվել է ու 4 հեռուստաալիքներով 2 օր ցուցադրվել տեսահոլովակ. Վեոլիա Ջրի ողջույնի խոսքը Ֆրանկոֆոնիա - 2018 գագաթնաժողովի մասնակիցներին:

Աշնան անձրևներին ընդառաջ, քաղաքներում անձրևատար համակարգերի մաքրման աշխատանքների մասին է պատմել «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱՆՁՐԵՎՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ» ռեպորտաժը, որը ցուցադրվել է 4 հեռուստաալիքով: Իսկ «Շանթ» հեռուստաալիքի «Առավոտը Շանթում» հաղորդաշարի հյուրն է եղել Հանրային կապերի ծառայության պետ Սուրադ Սարգսյանը, ով 35 րոպեի ընթացքում պատասխանել է հանրությանը հուզող հարցերին: Բոլոր այս հաղորդումները այնուհետև տեղադրվել են ընկերության կայքում, ֆեյսբուքյան ու ՅուԹյուբյան էջերում:




Հաշվետու ամսին, ինչպես միշտ, պատրաստվել են հրապարակումներ համակարգում ընթացող բազմապիսի աշխատանքների մասին: Դրանցից փոքրածավալները լուսանկարներով հանդերձ, իրենց տեղն են գտել Ֆեյսբուքյան էջում, իսկ առավել կարևորները նաև հրապարակվել են Վեոլիա Ջրի պաշտոնական կայքէջում ու նրա հետ համագործակցող 5 թերթերում ու ուղարկվել ԶԼՄ-ներին: Այլոց թվում ընթերցողներին է ներկայացվել հաղորդագրություններ Աշտարակում գտնվող Կենտրոնական կարգավարական խմբի գործունեության, լեռնային աղբյուրների ջուրը վերստին Մասիս քաղաքին ու հարակից գյուղերին մատակարարելու մասին:



Նաև իրավիճակից բխող հրատապ հրապարակումներ են իրականացվել: Օրինակ, հաշվի առնելով, որ ՀՀ ՀՇԿՀ-ն ու Ջրային կոմիտեն ջրի սակագնի ճշգրտման հայտի քննարկման հետ կապված ստուգումներ են սկսել՝ ջրի սպառման ծավալների հստակեցման նպատակով, Հանրային կապերի ծառայությունը օպերատիվ պատրաստել է և հրապարակել ինչպես թերթերում ու լրատվական կայքերում, այնպես էլ ընկերության ֆեյսբուքյան էջում ու կայքէջում՝ ծավալուն հոդված համակարգում 2017-2018թթ. ապօրինությունների դեմ տարվող աշխատանքի արդյունքների վերաբերյալ «ԲԱՐԵՆԻՂՃ ՄՊԱՌՈՂԸ ԶՊԵՏՔ Է ՏՈՒԺԻ» վերնագրով: Այնուհետև արձագանքել

Է Հանրային հեռուստաալիքի հարցին, նշելով, որ Վեոլիան ինքն էլ է շահագրգռված ճշմարտությունը բացահայտելու գործում, դրա համար էլ ուղեկցում է ու պարզաբանումներ տալիս վերը նշված կազմակերպությունների անդամներին:

Նաև արագ արձագանք է ապահովվել «araratnews.am» լրատվականի հրապարակմանը, կապված սպառողի՝ ֆեյսբուքյան էջում ջրի անորակության վերաբերյալ գրառման հետ. մոտ 2 ժամ անց «Վեոլիա Ջուր»-ը խմբագրությանն է ներկայացրել պարզաբանում՝ «ԽՆԴԻՐԸ ՊԵՏՔ Է ՓՆՏՐԵԼ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑՈՒՄ» վերնագրով: Նույնքան արագ անդրադարձ է կատարվել «Նովոսելցովո - Վանաձոր» ջրատարի վթարի վերացման աշխատանքների ընթացքին. ինչպես ֆեյսբուքյան էջում, այնպես էլ Լոռու մարզային «Ֆորտունա» հեռուստաալիքով: Դրա շնորհիվ հնարավոր է դարձել խուսափել սպառողների քննադատությունից:



Հոկտեմբերին նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետներում սպառողներին, շահագրգիռ կազմակերպություններին ու ՋԼՄ-ներին է ներկայացվել ջրանջատումների մասին հաղորդագրությունները, ամեն օր կազմվել են մամուլի տեսություններ, ինչպես նաև կատարվել են տնօրինության տարաբնույթ հանձնարարությունները:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

- Ծառայությունը, ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 12/09/2018 թվականի N 6594U հրամանի պահանջներով, մշակել է «Գրուպի Հակակոռուպցիոն վարվելակերպի կանոնների» վերաբերյալ Ընկերության Ղեկավար կազմի և միջին օղակի ղեկավարների վերապատրաստման դասընթացի գնահատման հարցաշարը:

- Ծառայությունը, ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից, հաշվետու ամսվա ընթացքում՝ համագործակցելով «Դամի տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների հետ լրամշակել է Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 16 ամբարձիչ սարքավորումների (բազմաձախարակ / կամրջակային կոունկ) տեխնիկական անվտանգության վկայագրերը և ներկայացրել է Ընկերության Գլխավոր Տնօրենի և Գլխավոր գործառնական տնօրենի համաձայնեցմանը/հաստատմանը: Ներկայումս վերոգրյալ փաստաթղթերի համար իրականացվում են փորձաքննության աշխատանքներ:

- Ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 22/01/2015 թվականի N 46-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգի» պահանջներով, մշակել է և ՀՀ Ջրային կոմիտե ներկայացրել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ 2018 թվականի ԱԻ և ՔՊ մասով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

6.2 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ

- Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 26/09/2018 թվականի թիվ 270-Ա որոշման և ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային Փրկարարական վարչության 19/10/2018 թվականի №17/1125 գրության պահանջներով Ծառայությունը Ընկերության «Արևմուտք» ՏՏ Լոռի տեղամասի շահագործման պատասխանատուի հետ միասին 24/10/2018 թվականին Լոռու մարզպետարանում մասնակցել է «Լոռու մարզի բնակչության և տարածքների պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով շտաբային ուսումնասվարժությանը:

Շտաբային ուսումնասվարժության նպատակն էր գնահատել մարզպետարանի, ՏԻՄ-երի, մարզի, կազմակերպությունների, ԱԻ հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, ՔՊ ծառայությունների և ՔՊ շտաբների ղեկավարների և անդամների ԱԻ և ՔՊ մասով պատրաստվածությունը, փոխհամագործակցությունը, ինչպես նաև ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս, կատարելագործել ուժերի փոխհամագործակցությունը:

6.3 Դասընթացներ/Սեմինարներ


- Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը սույն թվականի հոկտեմբերի 4-ին անցկացրել է պայմանագրային հիմունքներով «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ Ընկերության 19 քլորի օպերատորի «ԱՎՕ շահագործման մասնագիտական որակավորման» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացներ և գիտելիքների ստուգում:

- Ինչպես նաև իրականացվել են զոդողի և ԱՎՕ շահագործման պատասխանատու անձի որակավորման դասընթացներ/գիտելիքների ստուգում:

- Սույն թվականի հոկտեմբերի 1-ից Ընկերության և ՎԵՈԼԻԱ Հիմնադրամի ֆինանսավորմամբ Ֆրանս-

հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում մեկնարկել են Ընկերության ԵՏՍՏ Տնօրինության 20 մասնագետ-տեսուչի, «Արևելք» ՏՏ «Արևմուտք» ՏՏ 21 բանվորի մասնագիտական որակավորման դասընթացները:

Դասընթացների նպատակն է բարձարցնել Ընկերության վերոնշյալ մասնագիտությունների աշխատակիցների կատարողականության մակարդակը, ամրապնդել վերջիններիս շրջանում անվտանգության մշակույթը: Անշուշտ, այս Դասընթացների հիմնական տեսլականն է ապահովել Ընկերության ծառայությունների մատուցման որակի շարունակական բարելավումը:




● Սույն թվականի հոկտեմբերի 3-ից 4-ը ընկած ժամանակահատվածում Ծառայության պետը մասնակցել է ք.Պրահայում «ՎԵՈԼԻՍ ԳՐՈՒՊԻ» Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների Կայուն զարգացման կորորդինատորների կողմից կազմակերպված աշխատանքային հանդիպմանը/սեմինարին, որի ընթացքում կազմակերպիչների կողմից ներկայացվել են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կողմից կայուն զարգացման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) մասով կատարողական ցուցանիշները, ինչպես նաև այս շրջանակներում ԳՐՈՒՊԻ կողմից ֆիքսված նպատակները և խնդիրները: Հանդիման ընթացքում ներկայացվել է նաև «Վեոլիա Ջուր» Ընկերության կողմից կայուն զարգացման և ԿՍՊ-ի մասով 2017-2018 թթ-ին իրականացված «Մաքուր Սևան» բնապահպանական/սոցիալական և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում Անձնակազմի հմտությունների բարելավման ծրագրերը:



● Սույն թվականի հոկտեմբերի 22-ից 29-ը ընկած ժամանակահատվածում Ծառայությունը կազմակերպել է Ընկերության ղեկավար կազմի անդամների և միջին օղակի կառավարման պատասխանատուների՝ մոտ 140 աշխատակցի համար «Գրուպի Հակակոռուպցիոն վարվելակերպի կանոնների» վերաբերյալ վերապատրաստման դասընթաց և թեստավորում:

2018թ. հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում առողջության և անվտանգության մասով կազմակերպված դասընթացներին/ թեստավորումներին մասնակցած աշխատակիցների քանակները



* Հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել է անվտանգության մասով 62 աշխատակցի և որակի կառավարման և մասնագիտական որակավորման մասով 181 աշխատակցի դասընթաց:

6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ընկերության Արտադրական Վտանգավոր Օբյեկտների փորձաքննության աշխատանքների նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրել են ստուգայցներ՝ Արեգնադեմ, Օովասար, Մայիսյան, Վարդ Բաղ քլորակայաններում, Արարատյան 1/2, Արարատյան 3/4 պոմպակայան/քլորակայանում:



«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

